բոլորովին կը մերկացի։ Առաջին կորպուսն էլ մեծ մասով սկսել է շարժուել դէպի Թիկունք. ես վախենում եմ, որ կորպուսի վերջին զօրամասերը կը թողնեն Երզնկան նշանակուած ժամանակից առաջ։ Եւ մեր զօրամասերի հեռացումը այս կէտից և գրաւումը քիւրդերից ճակատագրական կերպով առաջ կը բերեն զինադադարի խախտում թիւրքերի կողմից և ընդհանուր յառաջխաղացում ամբողջ ճակատում։ Կասկածից վեր է, որ Երզնկայի շրջանի թիւրքական գրաւման հետեւանքը կը լինի այն, որ մենք կը պարպենք ամբողջ արեւմտեան ռազմաճակատը։ Թուրքեստանեան 2րդ կորպուսը և կովկասեան 5րդ կորպուսը նոյնպէս ճակատից մեկնելու հարց են յարուցել։ Մեր զօրքերի հեռանալը արեւմտեան ճակատից, աչքի առաջ ունենալով կովկասեան բանակի ներկայ վիճակը, անխուսափելի կերպով առաջ կը բերէ մեր գրաւած թիւրք հողամասերի պարպումը։ Ուրիշ խօսքով, Երզնկայի շրջանի պարպումը հաւասար է ամբողջ Թիւրքահայաստանի պարպումին, այսինքն՝ նշանակում է կորցնել այն ամենը, որ մենք ձեռք ենք բերել Թիւրքիայի դէմ մղած երեքամեայ յաղթական կռիւներով։ Այս պարագան իրաւունք է տալիս ինձ մի անգամ ևս խնդրելու, որ շտապով ուղարկէք հայկական զօրամասեր, որոնք հնարաւոր կը դարձնեն կայունացնել մեր դրութիւնը»։

Յունս. 10-ին Ալաշկերտի կոմիսար Գվոզդեւը Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ա. Խատիսեանին, ուղիղ հեռագրաթելով, հետեւեալ ձեւով է պատկերացնում կացութիւնը. «Ղարաքիլիսան թողնում է թշնամու յարձակումից առաջ դատարկուած քաղաքի տպաւորութիւն։ Ճակատից հեռացող Վերջին գունդը իր հետ տանում է շրջանի բոլոր հիմնարկութիւնները, անգամ փոստն ու հեռագիրը։ Հրամանատարական կազմ չկայ. կան միայն 150 անկանոն ձիաւորներ. տեղական բնակչութիւնն է պահում պարէնի պահեստները, զինուորական գոյքերը, հրետանու, ինժեներական և ռազմամթերքի պահեստներն ու վառօդարանները։ Ճանապարհների կայանները վերացուած են։ Դժուարութեամբ, մեր տեղական ուժերով պահւում է հեռագրական կապը։ Կոմիսարիատն ընդունել է 4րդ կորպուսի և հասարակական հիմնարկութիւնների անհաշիւ գոյքը։ Միայն ձիեր ընդունուած են մի քանի հազար հատ։ Մենք անզօր ենք տեղաւորել թողնուած հարստութիւնները։ Խիստ վախենում ենք արիւնոտ ընդհարումներից և աւազակութիւններից։ Քիւրդերն սկսեցին իրենց յարձակումներն ու թալանները գիւղերի, պահակամբերի և Մակուի երկաթուղու վրա, որը հազիւ շնչում է։ Հեռագրական հաղորդակցութիւնը Երեւանի հետ կտրուած է»։

Չորրորդ կորպուսի հրամանատարը հեռագրում է յուն. 13-ին. «Կորպուսի փոխադրական մասերը, կայանների զօրքերը, զինուորները, հիմնարկութիւնները հեռանում են անկարգ կերպով։ Անկարգութիւնները սաստկանում են օրէց օր։ Հայկական զօրամասերը ուժասպառուած են հիմնարկութիւնների և կայանների պահակութիւնից։ Առանց թիկունքից թարմ ուժերի առաքման կարելի չէ պատասխանատու լինել հետեւանքների համար»։

«Ռուս զինուորները ահաբեկում են տեղացիներին (հայերին) և բռնութեամբ ստիպում հեռանալ իրենց հետ», հեռագրում է կովկասեան բանակի սպայակոյտը։

Յունս. 16-ին սպայակոյտից գրում են զօր. Նազարբէգեանին. «Ճակատի դրութիւնը ողբերգական է. ամրացուած շրջանների լքումը առաջ է բերում առանձնապէս ողբալի կացութիւն և ինձ հարկադրում է տալ հետեւեալ հրահանգները ամրութիւնների պետերին. «Կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարը հրամայում է ձեզ, որ, աչքի առաջ ունենալով